ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՃԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԿԱՌԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՆՆԱ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ,
ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր- բուհ-կազմակերպություն համագործակցություն, զբաղվածություն, ինստիտուցիոնալ կառույցներ, կարիերայի կենտրոն, բիզնես ինկուբատոր, ակադեմիական բիզնես, գիտահետազոտական լաբորատորիաներ, ստարտափ, նորարարություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում երկրների մրցակցային առավելությունները կախված են նաև բարձր որակավորում ունեցող մասնագետներ պատրաստելու նրա կարողությունից: Կրթական համակարգը պետք է համապատասխանեցվի տնտեսության/գործատուների պահանջներին՝ զբաղվածության կարողությունների առումով: Այս հարթությունում առանձնակի կարևորություն ունի կրթության որակի և մասնագիտական հմտությունների համապատասխանեցումը գործատուների պահանջներին, որի արդյունավետությունը պայմանավորված է բուհ-կազմակերպություն համագործակցության սերտացմամբ և միջնաժամկետ ապագայում շրջանավարտների զբաղվածության հնարավորությունների ընդլայնմամբ: Կրթության որակի կառավարման և մասնագիտական հմտությունների զարգացման գործընթացում առանցքային է նաև ակադեմիական անձնակազմի և գործատուների հնարավորությունների և պահանջների համապատասխանեցումը: Նշված համատեքստում առանձնակի դերակատարում պետք է ունենան այնպիսի ինստիտուցիոնալ կառույցներ, ինչպիսիք են կարիերայի կենտրոնները, բիզնես ինկուբատորները, գիտահետազոտական լաբորատորիաները, որոնք, ըստ էության, կապակցող օղակ են հանդիսանում բուհ-կազմակերպություն համագործակցության ձևաչափում: Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները տարբեր ինս-

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 21T-5B193 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

տիտուցիոնալ կառույցների միջոցով պետք է խրախուսեն բոլոր մակարդակների ծրագրերում ուժեղացնելու «փափուկ հմտությունների» զարգացումը, գործնական պարապմունքները, արտալսարանային հանդիպումները, կրթաթոշակների հնարավորությունները, ստարտափ գաղափարների գեներացումը և առևտրայնացումը, ինչպես նաև ակադեմիական բիզնեսների հիմնումը: Նշված գործընթացը հնարավորություն կտա ամրապնդել բուհ-կազմակերպություն համագործակցությունը, բարձրացնել կրթության որակը և մասնագիտական հմտությունները համապասխանեցնել գործատուների պահանջներին: Կրթության որակի կառավարման և մասնագիտական հմտությունների զարգացման գործընթացում առանցքային է նաև ակադեմիական անձնակազմի և գործատուների հնարավորությունների ու պահանջների համապատասխանեցումը, ինչն իրատեսական է բուհերում գործող ինստիտուցիոնալ կառույցների համապարփակ գործառույթների իրագործման արդյունքում:

Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել բուհ-կազմակերպություն համագործակցության շրջանակներում գործող ինստիտուցիոնալ կառույցների գործունեությունը բուհերում, հաշվի առնելով ուսանող/շրջանավարտների բավարարվածությունը զբաղվածության, կարիերայի, ինչպես նաև ձեռնարկատիրության և ինովացիոն գաղափարների գեներացման, զարգացման ու առևտրայնացման ուղղությամբ տարվող աշխատանքներից: Հետազոտության արդյունքում բացահայտվել են հարցի առնչությամբ առկա խնդիրները և նախանշվել միջոցառումներ դրանց բարելավման ուղղությամբ:

Այսպիսով, բարձրագույն կրթության որակի ապահովման ժամանակակից քննարկումների համատեքստում արդիական է դարձել բուհ-կազմակերպություն բազմաբովանդակ և բազմամակարդակ համագործակցության մոդելի մշակման և զարգացման անհրաժեշտությունը:

Բուհ-կազմակերպության համագործակցության համատեքստում համալսարաններն առավելապես այնպիսի ավանդական կառուցակարգեր են կիրառում ինչպիսիք են՝ կրթության կազմակերպումը, գիտահետազոտական գործունեությունը, պրակտիկաների կազմակերպումը, շրջանավարտների ավարտական աշխատանքների նախապատրաստումը և այլն: Սակայն, *այսօր առավել քան երբևէ համալսարանների դերը սահմանափակված չէ միայն վերոնշյալ ավանդական մեխանիզմների կիրառմամբ, ավելին՝ ակադեմիական հաստատությունները պետք է նպատակ ունենան ակադեմիական նորարարության և բիզնես գաղափարների*

զարգացման միջոցով նպաստել «ձեռնարկատիրական համալսարան» հայեցակարգի գործնականում կյանքի կոչելուն[1]*:*

Բուհ-կազմակերպություն արդյունավետ համագործակցության մոդելի կիրառումը կնպաստի համալսարանական ուսումնական ծրագրերի զարգացմանը, որոնք կխթանեն համալսարանի և կազմակերպության միջև փոխադարձ ուսուցման, միմյանց հետ տեղեկատվության փոխանակման և փոխշահավետ համագործակցության հնարավորությունները[2]: Համապատասխանաբար կողմերի արդյունավետ համագործակցությունը կնպաստի ուսանողների ուսման ու ձեռնարկատիրական գործելակերպի ինտեգրմանը և զարգացմանը՝ ակադեմիական ձեռնարկատիրության[3], հետազոտության և նորարարության զարգացման միջոցով[4], ինչպես նաև ուսանողների և շրջանավարտների գործունակության բարձրացմանը[5]:

Այս առումով բուհ-կազմակերպություն համագործակցությունը ներառում է բազմաբովանդակ կառուցակարգերի շրջանակ, որը հնարավորություն է տալիս ինչպես բուհի, այնպես էլ մասնավոր/պետական կազմակերպությունների կողմից ստեղծել բազմավեկտոր համագործակցության լայն շրջանակ:

Հարկ է նշել, որ այս թեմայով գիտական հրապարակումների մեծ մասը հիմնականում նվիրված է համալսարանների կամ մասնավոր/պետական կազմակերպությունների մոտեցումներին, մինչդեռ ուսանողների և շրջանավարտների կարիերայի, զբաղվածության և նորարարության հանգամանքները գիտական ուսումնասիրության և վերլուծության առումով բավարար չափով ուսումնասիրված չեն ոչ միայն ՀՀ-ում, այլև աշխարհում: Ուստի այս ուսումնասիրությունն օգտակար է նաև համալսարանների և մասնավոր/պետական կազմակերպությունների համար՝ քան-

---

[1] **Lundvall B., Joseph K., Chiamande K., Vang J.** (2009), Handbooks of Innovation Systems and Developing Countries: Building Domestic Capabilities in a Global Setting, Edward Elgar Publishing, BEC library, pp. 311-312.

[2] **Nakagawa K., Takata M., Kato, K., Matsuyuki T., Matsuhashi T.** 2017, A University–Industry Collaborative Entrepreneurship Education Program as a Trading Zone: The Case of Osaka University, Technology Innovation Management Review, vol. 7, Is. 6, p. 39.

[3] **Klofstena M., Fayolleb A., Guerreroc M., Miand S., Urbanoe D., Wright M**. 2019, The Entrepreneurial University as Driver for Economic Growth and Social Change - Key Strategic Challenges, Technological Forecasting & Social Change, V. 141, p.150.

[4] **Martin M.** 2000, Managing university-industry relations: A study of institutional practices from 12 different countries, International Institute for Educational Planning/UNESCO, p. 13 https://unesdoc.unesco.org/ark:/48223/p f00 00120290/PDF/120290eng.pdf.multi

[5] **Ք. Նիկողոսյան,** Բուհ-կազմակերպություն համագործակցության կառուցակարգերը և ուղիները (ԵՄ և ԵԱՏՄ երկրների օրինակով), «Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն», 2020 № 2 (32), էջ 45

զի ուսումնասիրելով ուսանողների և շրջանավարտների դիտարկումները, խնդիրները, ինստիտուցիոնալ և գործառնական բացերի շրջանակը, ինչպես նաև ուսանողների բավարարվածության մակարդակը՝ կողմերը կկարողանան առավել արդյունավետ համագործակցել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով գիտական շրջանակներում բուհ-կազմակերպության համագործակցության բազմաձավալ մեխանիզմների և կառուցակարգերի շրջանակը, ինստիտուցիոնալ և գործառնական տարբերությունները՝ սույն հոդվածում քննարկվել են 2 տարբեր բուհերի ուսանողների և շրջանավարտների զբաղվածության և կարիերայի հնարավորությունների վերաբերյալ դիտարկումները:

Ուսումնասիրության համար իրականացվել են մեկ տեղական և մեկ միջազգային բուհերի համեմատական վերլուծություններ: Ընտրվել են Երևանի պետական համալսարանը և Իտալիայի Վենետո շրջանում գործող Կա՛ Ֆոսկարի համալսարանը: Երկու բուհերում իրականացվել է առցանց հարցաթերթիկային հարցում[1,2]:

Իտալիայի Կա՛ Ֆոսկարի համալսարանում գործող Կարիերայի ծառայության աջակցությամբ հարցումն ուղարկվել է անմիջապես համալսարանի ուսանողների էլեկտրոնային հասցեներին, իսկ հարցման արդյունքների ամփոփումը կենտրոնի կողմից օգտագործվել է որպես իրենց ծառայությունների գնահատման ներքին օգտագործման հաշվետվություն[3]: Հարցման արդյունքներն, ըստ պայմանավորվածության, կարող են օգտագործվել միայն ակադեմիական նպատակներով: Երևանի պետական համալսարանում հարցումն ուղարկվել է ուսանողներին համալսարանում գործող ուսանողական կառույցների միջոցով (Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն): Փորձ է արվել երկու բուհերում էլ հնարավորինս մեծ թվով ուսանողների ներգրավվել: Երևանի պետական համալսարանում (հետայսու՝ ԵՊՀ) և Կա՛ Ֆոսկարի համասալարանում ապահովվել է ինչպես հումանիտար, այնպես էլ բնագի-

---

[1] Երևանի պետական համալսարանի ուսանողների զբաղվածության և կարիերայի հնարավորությունների վերաբերյալ հարցում, https://questionpro.com/t/AScsPZtAAI,

[2] Ca' Foscari University Career Service- Student Satisfaction Survey, https://questionpro.com/t/AScsPZmYkb,

[3] Կարիերայի կենտրոնի աշխատակից Ռոզարիա Վալաստրոյի կողմից իրականացվել է տեխնիկական աջակցություն հարցման կազմակերպման և իրականացման ընթացքում: https://www.unive.it/data/strutture/111755

տական ուղղվածությամբ մասնագիտացված ուսանողների համամասնական մասնակցություն:

Ուսումնասիրված բուհերում գործող կարիերայի կենտրոնների ղեկավար կազմերի հետ հարցազրույցների արդյունքում վերլուծվել են տվյալ ինստիտուցիոնալ կառույցների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակը և գործելաոճը: Ձեռներեցությանն ու նորարարությանն ուղղված կառուցվածքային բազան ուսումնասիրելու նպատակով Կա'-Ֆոսկարի համալսարանում իրականացվել է նաև այցելություն համալսարանում գործող PINK[1] և VeniSIA[2] Կենտրոններ և անցկացվել են հարցազրույցներ կենտրոնների ղեկավար կազմերի հետ: Քանի որ Կա՛ Ֆոսկարի համալսարանում գործում են նաև ակադեմիական բիզնեսներ (spin-off)[3], հետազոտական թիմը իրականացրել է նաև հարզազրույցներ հիմնադիրների հետ՝ պարզելու վերջիններիս գործունեության առանձահատկությունները և առկա խնդիրները: Երևանի պետական համալսարանում վերոթվագրյալ կառույցները չեն գործում, ուստի, Կա՛ Ֆոսկարի համալսարանի հետ համեմատական հետազոտության արդյունքում իրականացվել է կառուցվածքային և գործառնական համեմատություն ու խնդրային վերլուծություն, ինչպես նաև մշակվել են ոլորտի զարգացման ուղղված անհրաժեշտ քայլերի և ծրագրերի համապարփակ շրջանակ:

Երկու բուհերում անցկացված հարցման նպատակն է պարզել ուսանողների և շրջանավարտների կարիերայի, զբաղվածության, ձեռնարկատիրության և նորարարության մասով տարվող աշխատանքների հասանելիությունը և նրանց բավարարվածությունը, ինչպես նաև փորձել գնահատել ինստիտուցիոնալ կառույցների գործառնական արդյունավետությունը, բացահայտել առկա խնդիրները:

[1] Promotion of Innovation and Know-How (PInK), https://www.unive.it/pag/30173/

[2] Venice sustainability and Innovation Accelerator, https://www.venisia.org/,

[3] Ca' Foscari Spin-offs, https://www.unive.it/pag/38165/, (Հարցազրույցներ անցկացվել են հետևյալ spin-off-երի հետ՝VeNice, Biofuture Medicine, Strategy innovation, Veasyt)

Ստորև ներկայացված է հարցման մասնակցությունը ըստ բուհերի (տե՛ս գծ. 1, գծ. 2)[1]:

Գծ. 1
Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարան



Գծ. 2
Երևանի պետական համալսարան



[1] Սույն հետազոտության ընթացքում ներկայացված բոլոր գծապատկերը կազմվել են հետազոտական թիմի կողմից՝ հաշվի առնելով հարցման արդյունքները:

Հարցմանը մասնակցել են ինչպես ուսանողներ, այնպես էլ շրջանավարտներ[1]: Այնուամենայնիվ՝ ԵՊՀ-ում շրջանավարտների մասնակցությունը կազմում է 38%, իսկ Կա՛Ֆոսկարի համալսարանում այն կազմում է ընդամենը 4%:

Գծ. 3
Ուսանողների մասնակցությունը ըստ կրթական աստիճանի



Մագիստրոսների մասնակցության առումով Կա՛ Ֆոսկարի համալսարանում դրսևորվել է ակնհայտ առավել առավելություն 58 %, այնինչ ԵՊՀ-ում այն կազմում է 12 % (տե՛ս գծ. 3):

ԵՊՀ-ում հարցվածների 70%-ը ծանոթ է Կարիերայի կենտրոնի գործունեությանը, իսկ Կա՛ Ֆոսկարի համալսարանում այդ ցուցանիշը կազմում է 80%: Ընդ որում, ԵՊՀ-ում ուսանողների միայն 27%-ն է ուսման տարիներին օգտվել Կարիերայի կենտրոնի մատուցվող ծառայություններից, մինչդեռ Կա՛ Ֆոսկարի համալսարանում այս ցուցանիշը 48% է (տե՛ս գծ. 4):

Հետազոտական թիմի կողմից առաջարկվել է պատճառների հնարավոր փակ ցանկ և “այլ” դաշտի առկայություն, ինչը հնարավորություն է տվել ուսանողներին նախանշել այն պատճառները, որ իրազեկ լինելով Կարիերայի կենտրոնի գործունեությանը, չեն օգտվել վերջինիս կողմից մատուցվող ծառայություններից:

[1] Գծապատկեր 3-ում՝ «այլ» պատասխանը ենթադրել է գիտաշխատողների և դասախոսների մասնակցությունը

Գծ. 4. Ուսանողների կարիերայի կենտրոնի ծառայություններին ծանոթ լինելը և օգտվելը ըստ բուհերի



Այսպիսով, ԵՊՀ-ում ակնհայտ առավելությամբ ուսանող/շրջանավարտների ծառայություններից չօգտվելու պատճառը՝ մատուցվող ծառայություններից տեղյակ չլինելու հանգամանքն է՝ 48%:

Գծ. 5
Կարիերայի կենտրոնի ծառայությունների չօգտվելու պատճառներ



Կա՛ Ֆոսկարի համալսարանում ևս առկա է վերոնշյալ խնդիրը, սակայն այն կազմում է միայն ուսանողների 25%-ը, այնինչ Կա՛ Ֆոսկարի համալսարանում ուսանողների մոտավորապես 31%-ը գտնում է, որ այդ ծառայություններից օգտվելը իր համար առաջնահերթ չի եղել (Տե՛ս գծ. 5)։

Իհարկե նման վիճակագրությունը մտահոգիչ է, քանի որ հետագա հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսանող-շրջանավարտները ունեցել են զբաղվածության խնդիրներ, ինչպես նաև իրենց նորարարական գաղափարը զարգացնելու անհրաժեշտություն, սակայն չեն օգտվել մատուցվող ծառայություններից։

Նման իրավիճակի վիճակագրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԵՊՀ-ում կարիերայի կենտրոնի կողմից չեն իրականացվում անհրաժեշտ քայլեր տեղեկատվության տարածման մասով, իսկ Կա՛ Ֆոսկարի համալսարանում, իրականացվող տեղեկատվական քայլարշավը դրական է, սակայն ուսանողները իրենց կարիերայի հետ կապված հարցերը չեն կապում կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների հետ, ինչը որոշակի առումով կարող է կապված լինել կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների սահմանափակվածությամբ և ոչ հասանելիությամբ։ Չնայած այն հանգամանքին, որ ուսանողների գրեթե 10%-ը նշել էր «այլ» պատասխանների հանգամանքը, սակայն երկու բուհերում այդ մասով ուսանողների կամ շրջանավարտների կողմից որևէ մեկնաբանություն չի արվել, որը հնարավորություն չի տվել վերհանել հնարավոր այլ խնդիրների շրջանակը։

Հաշվի առնելով տեղեկատվության տարածման կարևորությունը, ուսանողների և շրջանավարտների տեղեկացված լինելու անհրաժեշտությունը, վերջիններիս ներկայացվել է որոշակի կապուղիների շրջանակ՝ պարզելու թե ինչպես են նրանք տեղեկացել կենտրոնի գործունեության մասին։

Այս առումով առկա է բավական հետաքրքրական վիճակագրություն՝ մասնավորապես Կա՝ Ֆոսկարի համալսարանում ուսանողների համար հիմնական հաղորդակցության կապուղին եղել է Կարիերայի կենտրոնի կողմից ուղարկված էլ. նամակները՝ 63%, Կենտրոնի կայքէջի, Facebook կամ Linkendin սոցիալական ցանցերում հրապարակումները՝ 14% և Կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումները՝ 15%։ Այնինչ ԵՊՀ-ում ուսանողները կարիերայի կենտրոնի մասին տեղեկացել են Կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումների ընթացքում՝ 30.77%, Կենտրոնի կայքէջի, Facebook կամ Linkendin սոցիալական ցանցերի հրապարակումների արդյունքում՝ 25.64%, և Կարիերայի կենտրոնի կողմից ուղարկված էլ. նամակների արդյունքում ՝ 23.08%։

Տարբերությունները բացատրվում են մի քանի հանգամանքներով. նախ Կա՛ֆոսկարի համալսարանում ուսանողական էլեկտրոնային հասցեները կցված են Կարիերայի կենտրոնի տվյալների բազային, ինչն ապահովում է ուսանողների ներգրավվածությունը: Կա՛ֆոսկարի համալսարանում յուրաքանչյուր ուսանող ունի իր նույնականացման համարը՝ առանց որի նա չի կարող մասնակցել քննություններին, գրանցվել և իրականացնել համալսարանական որևէ գործողություն: Այդ համարը ըստ ավտոմատացման սկզբունքի Gmail համակարգին կցված լինելու արդյունքում համարվում է ուսանողի էլ. հասցեն: Այն բավական հարմար է օգտագործողի համար, և կցված լինելով Gmail ծրագրային ապահովմանը, ուսանողներին տալիս է հնարավորություն միաժամանակ օգտագործել վերջինիս հնարավորությունները: Իսկ ԵՊՀ-ում ունենք հետևյալ պատկերը՝ ուսանողները ունեն համալսարանական էլեկտրոնային հասցե, որի կիրառման և օգտագործման համար չկան բավարար ծրագրային պայմաններ: Միևնույն ժամանակ ուսանողի համալսարանական տարբեր ծառայություններիից օգտվելը կապված չէ համալսարանական էլ. հասցեի հետ, ինչը չի մոտիվացնում ուսանողին այն օգտագործել: Միևնույն ժամանակ, այն օգտագործման առումով չունի հարմար տեխնիկական և ծրագրային ապահովում: Ինչ վերաբերում է Կարիերայի կենտրոնի գործունեությանը, ապա այս առումով ԵՊՀ կարիերայի կենտրոնը ուսանողի էլ. հասցեն որպես հաղորդակցության կապուղի օգտագործում է հետևյալ կերպ՝ ուսանողին ավարտական դիպլոմը ստանալու ժամանակ առաջարկվում է լրացնել անձնական տվյալների թերթիկ՝ ներառյալ էլ հասցեն: Սա իհարկե դրական առաջընթաց է, սակայն ստացվում է, որ ուսանողը իր ուսումնառության ողջ ընթացքում կամ ծանոթ չի կենտրոնի գործունեությանը, կամ պարզապես չի տեղեկանում իրականացվող միջոցառումների և ծրագրերի մասին:

Հարցազրույցների արդյունքում ուսումնասիրվել են նաև երկու կենտրոնների կողմից ներկայացվող ծառայությունների ընդհանուր շրջանակը: Ընդ որում, դրանք մեծամասամբ համընկնում են: Այս ամենը հաշվի առնելով, ուսանողներին և շրջանավարտներին ներկայացվել է կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների ցանկ և առաջարկվել նշել այն ծառայությունները, որից երբևէ օգտվել են: (Տե՛ս գծ. 6)

Գծ. 6

Կարիերայի կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու շարժառիթները



Ներկայացված գծապատկերից երևում է, որ տարբերությունները էական չեն, ինչը նշանակում է, որ 2 բուհերում ուսանողների կարիերայի կենտրոն այցելության նպատակները հարաբերական առումով նույնն են: Միևնույն ժամանակ, ուսանողներին առաջարկվել է 1-5 բալային սանդղակով գնահատել թե ինչ հմտություններ են ձեռք բերել, կամ ինչ են սովորել Կարիերայի կենտրոն այցելության ընթացքում:

Գծ. 7-ից պարզ երևում է, որ Կա՛ Ֆոսկարի համալսարանում, ներկայացված հմտություններին տրված գնահատականը միջինից ցածր է և տատանվում է (2.16-3.24) միջակայքում: Իսկ ԵՊՀ-ում գնահատականները տանատվում են (2.38-4.42) միջակայքում: ԵՊՀ-ում հիմնական ձեռք բերված հմտությունը՝ կարիերայի, կրթության, և աշխատանքի մասին տեղեկատվություն ստանալն է եղել: Երկու բուհերում էլ ամենից ցածր ցուցանիշը արձանագրվել է ստարտափի ձևավորման և ստեղծման հմտության մասով:

Գծ. 7: Կարիերայի կենտրոն այցի կամ միջոցառումներին մասնակցության արդյունքում ստացած հմտությունների գնահատում 1-5 բալային սանդղակով



Քանի որ ստարտափի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված խորհրդատվության առումով գնահատականը երկու բուհերում էլ բավական ցածր էր, իրականացվել է ուսանողների նորարարության և ձեռներեցության զարգացմանը նպաստող ինստիտուցիոնալ կառույցների վերլուծություն: ԵՊՀ-ում, ուսանողների ձեռնարկատիրական և նորարարության հմտությունների առաջխաղացման և զարգացման առումով այս պահին որևէ ինստիտուցիոնալ կառույց չի գործում: ԵՊՀ-ում 2017թ.-ին հիմնվել էր ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնը, որը կառուցվածքային և անձնակազմի փոփոխություններով պայմանավորված 2019թ.-ից չի գործում: Կենտրոնի գործունեությունը միտված է եղել ԵՊՀ ուսանողների շրջանում ձեռներեցության զարգացմանը ու ինովացիոն ուղղությամբ հմտությունների և կարողությունների զարգացմանը: 2021թ.-ին ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է ԵՊՀ Բիզնես ինկուբատորը, որը սակայն դեռևս ակտիվ գործունեություն չի ծավալում:

Կա'ֆոսկարի համալսարանում գործող կարիերայի կենտրոնը զբաղվում է որոշակի աջակցության տրամադրմամբ՝ սակայն կենտրոնի պա-

տասխանատու աշխատակցի հետ հարցազրույցի արդյունքում պարզ դարձավ, որ համանման աջակցության տրամադրումը՝ սահմանափակվել է միայն սեմինարների և վերապատրաստման ծրագրերի անցկացմամբ։

Այժմ Կա՛ Ֆոսկարի համալսարանում գործում է՝ VeniSIA կենտրոնը, որը նորարարության ուղղված աքսելերատոր է հիմնված Վենետիկում և նվիրված է բիզնես գաղափարների և տեխնոլոգիական լուծումների մշակմանը։ VeniSIA-ի գործունեությունը ուղղված է ինչպես մասնավոր-պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերներին, այնպես էլ ուսանողներին և ակադեմիական միջավայրին։ Միևնույն ժամանակ համալսարանում գործում է PINK կենտրոնը՝ որը ուղղված է համալսարանի հետազոտության և բիզնեսի, հաստատությունների և տարածաշրջանի միջև տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցմանը։ PINK-ի գործունեությունը ուղղված է համալսարան-բիզնես համագործակցության համատեքստում հետազոտական արդյունքների առևտրայնացմանը և նորարարությունն ու ակադեմիական բիզնեսների զարգացմանը։ Հարկ է նշել, որ կենտրոնը չի զբաղվում ուսանողների նորարարական գաղափարների զարգացմամբ։

Հաշվի առնելով այդ հանգամանքը ուսանողներին առաջարկվել է նշել, արդյոք ուսման տարիներին ունեցել են որևէ ստարտափ գաղափար։ Ըստ գծապատկեր 8-ի ԵՊՀ ուսանողների առնվազն 38%-ը ունեցել է ստարտափ գաղափար, իսկ Կա՛ ֆոսկարի համալսարանում՝ 20%-ը։

Գծ. 8 Ուսանողների ստարտափ գաղափար ունենալը ըստ համալսարանների



Այն հարցին, թե ուսանողները, որ ստորաբաժանում են դիմել իրենց ստարտափ գաղափարի աջակցության համար՝ ներկայացված գծապատկերից պարզ է դառնում, որ 2 համալսարաններում կա՛մ ուսանողները հետաքրքրված չեն եղել դիմել որևէ ստորաբաժանում, կա՛մ չեն դիմել, քանի որ չկա նման ստորաբաժանում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ բուհերում ինստիտուցիոնալ առումով չկան համապատասխան կառույցներ և ուսանողները որևէ նորարարական գաղափար ունենալու դեպքում առավել միտված են դիմել արտահամալսարանական աջակցության (Տե՛ս գծ 8):

Չնայած այն հանգամանքին, որ Կա՛Ֆոսկարի համալսարանում սկսել է գործել VenISIA-ն, այնուամենայնիվ այն բավական նոր է և կառույցը ուսանողներին ներգրավելու առումով դեռևս բավական աշխատանք է տանում:

Գծ. 9 Ուսանողների կառույցներին դիմելը ըստ բուհերի



Այնուամենայնիվ, ուսանողների շրջանում ձևավորված նորարարական գաղափարները հիմնականում մնացել են գաղափարի ձևավորման փուլում՝ մասնավորապես ԵՊՀ-ում այն կազմում է 37%, իսկ Կա Ֆոսկարի համալսարանում՝ 44%: ԵՊՀ-ում ուսանողների 26%-ը, իսկ Կա՛ Ֆոսկարիում 28 %-ը նշել են, որ պարզապես չեն կարողացել իրականացնել իրենց նորարարական գաղափարը: Նման վիճակագրությունը ևս մեկ անգամ թույլ է տալիս եզրակացնել, որ ինստիտուցիոնալ կառույցների գործունեությունը բուհերում բավական թույլ է: Թեև ուսանողների շրջանում

կան գաղափարներ, որոնք արդեն իսկ ձևավորված և կայացած ստարտափներ են համարվում: Այս առումով երկու համալսարաններում ունենք նույնատիպ տոկոսային հարաբերակցություն՝ 7%:

Այն հարցին թե ինչն է խանգարել ուսանողներին կյանքի կոչել իրենց գաղափարը՝ Կա Ֆոսկարի համալսարանի ուսանողները շեշտել էին ֆինանսական խնդիրները, փորձի և հմտությունների պակասը այդ ոլորտում, համապատասխան աջակցության բացակայությունը: Հետաքրքրիր է նաև, որ Կա՛ Ֆոսկարի համալսարանում ուսանողները նշել էին նաև, որ իրենց նորարարական գաղափարը չեն կապում համալսարանի հետ և իրենց գործունեությունը մեծապես կապված է այլ արտահամալսարանական կառույցների հետ: Սա իհարկե որոշակի առումով ենթադրում է, որ համալսարանում մեծապես շեշտադրված է ակադեմիական բիզնեսի զրագացումը, բայց ոչ ուսանողական գաղափարներին աջակցությունը: ԵՊՀ ուսանողները ևս շեշտել էին՝ ֆինանսական խնդիրները և այլոց կողմից գաղափարը ընդունելի չլինելու հանգամանքը:

Վերոնշյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2 բուհերում բուհ-կազմակերպություն համագործակցության համատեքստում ուսանողների բաղադրիչը անտեսված է: Գիտական գրականության մեջ ևս հիմնավորապես շեշտադրում են ակադեմիական նորարարության անհրաժեշտությունը, բայց ոչ ուսանողական նորարարության և ձեռնարկատիրության զարգացումը:

Այսպես, հարցման ընթացքում ուսանողներին և շրջանավարտներին առաջարկվել է նշել, արդոք ունեն զբաղվածություն որևէ ոլորտում: Գծ. 10-ում երևում է, որ ԵՊՀ ուսանողների մեծ մասը՝ 69%-ը, զբաղված է, այնինչ Կա՚Ֆոսկարի համալսարանում ուսանողների զբաղվածությունը կազմում է ընդամենը 27%:



Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, թե ինչպես են ուսանողները գտել իրենց աշխատանքը: Այստեղ վիճակագրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Կա՛ֆոսկարի համալսարանում ուսանողների 59%-ը, իսկ ԵՊՀ-ում 56%-ը գտել է աշխատանք սեփական նախաձեռնությամբ: Իսկ համալսարանի աջակցությամբ աշխատանքի անցած ուսանողների թվաքանակը երկու բուհերում կազմում է գրեթե 7%: Նման ցուցանիշը թույլ է տալիս եզրակացնել, որ այնուամենայնիվ զբաղվածության մասով ևս բուհերում գործող կարիերայի կենտրոնները չեն մատուցում համապատասխան ծառայություններ կամ մատուցվող ծառայությունները անարդյունավետ են և չեն թիրախավորում խնդիրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ իրականացված հետազոտության արդյունքում ստացված տվյալները՝ հնարավորություն են տալիս առանձնացնել մի քանի խնդիրներ և առաջարկել լուծման ուղիներ :

• **Կառուցվածքային խնդիրներ** - սա վերաբերում է բուհերում գործող այն ստորաբաժանումների գործունեությանը, որոնք պետք է ուղղված լինեն ուսանողների զբաղվածության աջակցությանը, նորարարության և ձեռնարկատիրության զարգացմանը: ԵՊՀ-ում այս մասով ունենք այլևս չգործող ձեռներեցության զարգացմանն ուղղված կենտրոն, գրեթե մեկ տարի առաջ ստեղծված և դեռևս լիարժեքորեն չգործող ԵՊՀ Բիզնես ին-

կուբատոր, Կարիերայի կենտրոնի գործունեությունը մեծապես ուղղված է զբաղվածության մասով շրջանավարտներին աջակցության տրամադրմանը, իսկ ուսման ընթացքում ուսանողների հետ չկան հաղորդակցման համապատասխան կառուցակարգեր: Կա՛ Ֆոսկարի համալսարանում ինչպես ակադեմիական աշխատակիցների, այնպես էլ ուսանողների ձեռներեցության զարգացմանն ուղղված կենտրոններ գործում են, սակայն ակադեմիական աշխատակիցների մասով աշխատանքներն առավել կայացած են և համալսարանում գործում են մեկ տասնյակից ավելի ակադեմիական բիզնեսներ (spin-off), այնինչ ուսանողների աջակցության մասով տարվող աշխատանքները դեռևս նոր են և ինստիտուցիոնալ կառույցը այդ ուղղությամբ մեծ անելիք ունի[1]:

• **Գործառնական խնդիրներ**- ԵՊՀ-ում ուսանողների և շրջանավարտների հետ կապի ապահովման մասով առկա է համագործակցության պակաս ֆակուլտետային, վարչական անձնակազմի և այլ ստորաբաժանումների միջև: Չի գործում ուսանողների հետ կապի ապահովման պատշաճ մեխանիզմ և այս առումով բացակայում են համապատասխան կարգավորիչ մեխանիզմները: Ֆունկցիոնալ տեսանկյունից, համալսարանում գրեթե հստակ սահմանված չեն ինչպես ռազմավարական, այնպես էլ մարտավարական անհրաժեշտ քայլերն ու թիրախները: Չեն թարմացվում կարիերայի կենտրոնի գործունեության ուղղությունները և դրանք չեն հարմարեցվում ժամանակի արագընթաց փոփոխություններին:

• **Համակարգային խնդիրներ**- բուհ-կազմակերպություն համագործակցությունը ՀՀ-ում դեռևս հիմնված է ավանդական կառուցակարգերի գործարկման վրա: Այնինչ, Կա՛ ֆոսկարի համալսարնում այս մասով առկա են հստակ մոտեցումներ՝ նպատակ ունենալով բուհերում զարգացնել հետազոտությունն ու նորարարությունը՝ մասնավոր/պետական կազմակերպությունների հետ համալսարանի համագործակցության զարգացման և խորացման շնորհիվ: Սակայն հարկ է առանձնացնել, որ Կա՛ Ֆոսկարի համալսարնում ի տարբերություն ակադեմիական նորարարությանը, ուսանողական նորարարության զարգացումը դեռևս «սերտաճած» չէ համալսարանին և ինչպես պարզ դարձավ հետազոտության արդյունքներից՝ ուսանողներն առավել հակված են արտահամալսարանական աջակցությանը:

• **Ուսումնական/կրթական խնդիրներ**- ԵՊՀ-ում կրթության կազմակերպման ուղղությամբ չկա նորարարությանն ուղղված որևէ մոդուլ կամ դասընթաց: Հատկապես անհրաժեշտ է շեշտել, որ նորարարության զարգացումը պետք է դրսևորվի ինչպես հումանիտար-հասարակագիտական,

[1] **Կ.Խաչատրյան, Ք. Նիկողոսյան,** Բուհ-Կազմակերպություն համագործակցության ինստիտուցիոնալ խնդիրները ՀՀ-ում, Լրաբեր հասարակական գիտություններ, 1(664), էջ 60-63:

այնպես էլ բնագիտական ուղղությամբ սովորողների շրջանում։ Կա՛ Ֆոսկարի համալսարանում գործում է կրթական մոդուլ՝ MINOR, որն ուղղված է բոլոր մասնագիտացման ուսանողների ներգրավվածությանը։ Մոդուլը կազմված է 3 դասընթացից և ուսանողներին ապահովում է հավելյալ կրեդիտներ։ Դասընթացներին մասնակցության արդյունքում ուսանողները զարգացնում են իրենց նորարարական և ձեռնարկատիրական հմտությունները, սակայն այս առումով հիմնական խնդիրը այն է, որ մոդուլի ավարտից հետո համալսարանը կապ չի ապահովում տվյալ գաղափարը զարգացնելու ուղղությամբ և չի առաջարկում տեխնիկական ու ֆինանսական աջակցություն։

Ներկայացված խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները՝

• **Կառուցվածքային առումով՝** ԵՊՀ-ում ստեղծված Բիզնես ինկուբատորը հնարավորինս արագ գործարկել, որը կօգնի զարգացնել և աջակցել ինչպես ակադեմիական,այնպես էլ ուսանողական հատվածին իրենց նորարարական բիզնեսը կյանքի կոչելու հարցում։ Կա՛ Ֆոսկարի համալսարանում առաջարկվում է խթանել արդեն իսկ գոյություն ունեցող կառույցի գործունեությունը, իրականացնել տեղեկատվության տարածման արշավներ և օգնել ուսանողներին կյանքի կոչել իրենց գաղափարները։ Ակադեմիական բիզնեսների հիմնադիրների հետ հարցազրույցներում պարզ դարձավ, որ Կա՛ ֆոսկարի համալսարնում իրենց բիզնեսի զարգացման համար չկան անհրաժեշտ ֆինանսական ներհոսքեր և այս մասով պետական աջակցությունը սահմանափակ է։

• **Գործառնական առումով՝** ստեղծել ուսանողների հետ կապի ապահովման պատշաճ կառուցակարգ, ապահովել մշտական կապ և ուսանողների կարիքների գնահատման հիման վրա իրականացնել թիրախավորված ծրագրեր։

• **Համակարգային առումով** առաջարկվում է ստեղծել բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացմանն ուղղված պետական օրենսդրական կանոնակարգեր և խրախուսել համանման համագործակցության զարգացումը համալսարանների համար՝ պետական ֆինանսական աջակցության ավելացմամբ և կազմակերպությունների համար՝ որոշակի հարկային ֆինանսական բեռի թեթևացմամբ։

• **Ուսումնական/կրթական առումով** առաջարկվում է ԵՊՀ-ում ներդնել կրթական մոդուլ՝ Կա՛ Ֆոսկարի համալսարանի օրինակով, ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ուղղվածությամբ ուսանողների համար։ Վերոնշյալը ենթադրում է հետամուտ լինել կրթական մոդուլի

արդյունքում առաջարկված գաղափարների զարգացմանը, տեխնիկական ու ֆինանսական աջակցությանը:

Այս համատեքստում, համագործակցության ձևերի և մեխանիզմների որոնման և մշակման խնդիրը, որը հաշվի կառնի բոլոր շահագրգիռ կողմերի (պետություն, բիզնես, հասարակություն, առանձին սոցիալական խմբեր, քաղաքացիներ, ուսանողներ, շրջանավարտներ) շահերն ու հնարավորությունները, ակնհայտ է, որ երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնի աշխատանքային ռեսուրսների որակի, աշխատանքի արտադրողականության և երկրի մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև ազգային նորարարական ներուժի խթանմանն ու զարգացմանը:

Карлен Хачатрян, Анна Акопджанян, Кристине Никогосян, Возможности занятости и карьерного роста студентов и выпускников в контексте сотрудничества вуз-организация - В контексте обсуждений относительно повышения качества образования, актуальна и необходима разработка и совершенствование многозначимой и многоуровневой модели сотрудничества вузов и организаций. Система образования должна соответствовать запросам экономики/работодателей с целью обеспечения необходимых возможностей трудоустройства и занятости. Внедрение эффективной модели сотрудничества вузов и организаций, в свою очередь будет способствовать совершенствованию учебных программ, развитию и интеграции студентов в предпринимательскую деятельность, генерации, развитии и коммерциализации инновационных бизнес идей, а также повышению производительности труда студентов и выпускников.

Целью данного исследования является рассмотрение и анализ действующих в вузах институциональных структур относящихся сотрудничества вузов и организаций, по отношению оценки степени удовлетворенности студентов/выпускников занятостью, карьерой, а также возможностями предпринимательства, генерацией, развитием и коммерцализацией инновационных бизнес идей.

Karlen Khachatryan, Anna Hakobjanyan, Kristine Nikoghosyan, Students and Graduates Employment and Career Growth' Opportunities in The Framework of University-Organization Partnership - In the context of discussions on the quality assurance process of education, it has become relevant to develop a multi-content and multi-level cooperation model of the university-organization partnership. In terms of employability, the educational system should be adjusted to the demands of the economy and employers. Thus, the implementation of the effective university-organization partnership model will contribute

to the development of the subjects' curricula, the incorporation and growth of entrepreneurial activities among students, as well as to the improvement of students' and graduates' employability.

The purpose of this research is to study the functioning of the University institutional structures operating within the framework of university-organization partnership, considering how satisfied students and graduates are with the work done in terms of employment, career advancement, as well as generation, development, and commercialization of their innovative ideas.

Ուղարկվել է խմբագրություն 15.09.2022թ.
Գրախոսվել է 19.09.2022թ.
Ստորագրվել է տպագրության 21.09.2022թ.